պաշտօնը նա պատուով վարեց ամբողջ 25 տարի (1655–1680)։

Յակովբ Զուղայեցին մեր կեանքում կըրկնակի արժէք ունի. նա նշանաւոր է նախ՝ որպէս ամենայն Հայոց կաթողիկոս եւ ապա՝ որպէս քաղաքական գործիչ։

Դաւրիժեցին մեծ գովասանքով է խօսում կաթողիկոս Զուղայեցու մասին, անուանելով նրան «մեծահոգ եւ երկայնամիտ», «խոհական եւ արժանաժառանգ հայրապետ»։ Հայոց կաթողիկոսների շարքում նրա անունը եւս յիշելով, պատմագիրը ցանկանում է, որ Աստուած նրան «երկար ամօք պահեսցէ յուրախութիւն սրտից մերոց եւ ի փառս անուան իւրոյ» (Գլ. Լա)։

Նոյնպիսի հիացմունք ունի կաթողիկոս Զուղայեցու հանդէպ նաեւ Զամչեանը։ «Յամենայնի եցոյց զինքն — գրում է նա Զուղայեցու մասին — առաքինի եւ զգօնամիտ, լայնախորհուրդ եւ վեհանձն» (Գ. 657)։

Զուղայեցու վայելած այս յարգանքը բըխում էր նախ նրա շինարար գործունէութիւնից։ Բազմաթիւ են շինարարական այն գործերը, որոնց կամ անմիջական հեղինակն էր նա, կամ նրանց հովանաւորողը, խրախուսողը։ Վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, ջրանցքներ — ահա՛ այն շէնքերը, որոնց մի խոշոր մասի գոյութիւնը մեր երկիրը պարտական է Զուղայեցու շինարար ձեռքին։ Եւ այդ շինարարութիւնը մեր աչքում աւելի է արժէքաւորւում, երբ ի նկատի ենք առնում, որ այդ վանքերն ու եկեղեցիները, մանաւանդ վանքերը, ո՛չ թէ սովորական կրօնական հաստատութիւններ էին միայն, այլ եւ մի-մի դպրոցներ, բարոյական կեանքի եւ լուսաւորութեան մի-մի օջախներ, որոնք ուսում, լոյս, ազգային ինքնաճանաչութիւն եւ բարոյական կեանքի սկզբունքներ էին սփռում իրենց շուրջը։

Մենք արդէն տեսանք, որ նա հիմքից նորոգեց Դարաշամբի Ս. Ստեփաննոսի վանքը, այն էլ զժոխային նեղութիւններով — քարը, կիրը, փայտը եւ բոլոր հարկաւոր նիւթերը Արաքսի միւս ափից, հեռաւոր տեղերից դրաստներով բերել տալով։ Այնուհետեւ նա շինեց եւ վերջացրեց Էջմիածնի զանգակատունը, որը սկսել էր Փիլիպոս կաթողիկոսը, բայց կիսատ էր մնացել, որովհետեւ Երեւանի Խանը, թշնամի լինելով Փիլիպոսին, արգիլել էր շինութիւնը։ Նրա շինարարական մեծ գործերից մէկն էլ այն էր, որ փորել տուեց մի երկար ջրանցք եւ ջուր բերեց Էջմիածին, դրա հետ միասին աւելացնելով նաեւ վանքի եկամուտները։

Կանգ չառնելով մէկ առ մէկ Զուղայեցու բոլոր շինարարական վաստակների վրայ, Դաւրիժեցու մէկ վկայութեամբը փակենք մեր խօսքը. «Կան բազում վանօրայք նորոգեալ եւ բազում եկեղեցիք ի հիմանց նոր շինեալք՝ ի քաղաքն Տփխիս եւ ի դաւառն Լօռւոյ եւ յաշխարին Արարատու, ի դաւառն Սիսակայ եւ յաշխարհին Զանգեզուրայ, ի քաղաքս Նախջուան եւ ի գիւղօրայս նորա, որպէս չքնաղ եւ մեծաշուք եւ վայելուչ եկեղեցին Աստապատու եւ քաղաքին Նախջուանու եւ Ճահկայ գեղջն եւ Գաղ գեղջ, որք շինեցան յաւուրս տեառն Յակոբ կաթողիկոսի» (Գլ. ԻԶ)։

Զուղայեցու կաթողիկոսութեան միւս գեղեցիկ եւ բնորոշ գիծն էլ այն է, որ նա լինելով ուսումնասէր մի անձնաւորութիւն, նպաստել է հայ տպագրութեան եւ առ հասարակ հայ գրքի ծաղկման։

Ամենից առաջ եւ գլխաւորը՝ Առաքել Դաւրիժեցու պատմութիւնը, որը միակ եւ շատ թանկագին աղբիւրն է 17-րդ դարի մեր պատմութեան համար, մենք պարտական ենք Յակոբ Զուղայեցուն։ Ճիշդ է, թէեւ Դաւրիժեցին իր պատմութիւնը գրել սկսել էր Փիլիպոս կաթողիկոսի առաջադրութեամբ եւ հարկադրանքով, սակայն նրա մահից յետոյ թողել էր կիսատ եւ տրամադրութիւն չունէր շարունակելու։ Պատճառը, որ ինքը արդէն ծերացած լինելով, գործը յիրաւի շատ ծանր էր նրա համար, իր ասածին պէս՝ «կարի բազմախոնջ, յոգնաշխատ, բազմաերկ եւ տաժանելի»։

Սակայն 2 տարուայ դադարից յետոյ՝ նա ստիպուած է լինում նորից գրիչը ձեռք առնել եւ իր «տաժանելի» գործը շարունակել, որովհետեւ Յակոբ կաթողիկոսը, լաւ ըմբռնելով նրա աշխատութեան արժէքը, համոզում է նրան եւ նորից գործի լծում։ «Սրբազան հայրապետն մեր Յակոբ կաթողիկոս — գրում է նա — վերստին յիշումն արար այսմ գործոյ եւ